



ՊԶՏԻԿ-ՄԶՏԻԿ

ՄԵՐ ՅԱԶՈՐԴ ԹԻՎԸ՝ ԵՆԵՇՆԱԲԹԻ ՈՐԲԱԾ, 23 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2014

«ԱԶԴԱԿ»Ի ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱԲԵԼՈՒԱԾ




ՍՕՍԻ ՑԻՇԱՏԱԿԻ ՖՈՆՏ



ԼԻՔԱՆԱՆ


Լիբանան իր անկախությունը ֆրանսացիներեն ձեռք բերաւ 22 Նոյեմբեր 1922-ին: Նախապես՝ 18-րդ դարէն սկսեալ Լիբանան մաս կը կազմէր Օսմանեան կայսրութեան ու այդպէս կը մնայ մինչեւ Զամաշխարհային առաջին պատերազմը: Անկէ ետք՝ 1 Սեպտեմբեր 1920-ին, կը հռչակուի Մեծն Լիբանանի պետութիւնը ֆրանսական իշխանութեան տակ, իսկ 1 Սեպտեմբեր 1926-ին կը հռչակուի Լիբանանի Զանրապետութիւն դարձեալ ֆրանսական հովանաւորութեամբ: Աւելի ուշ՝ համաշխարհային Բ. պատերազմին, լիբանանցիները կը պարտադրեն, որ Ֆրանսան ճանչնայ Լիբանանի անկախութիւնը 22 Նոյեմբեր 1943-ին: Ֆրանսացի վերջին զինուորները Լիբանանէն կը հեռանան 1946-ին:



Աբգար Աբգարեան - 2. դասարան



Նարեկ Գլընճեան - 2. դասարան



Մոսիկ Տոլսիւրեան - 7. դասարան



Ռիթա Սահիունի - 2. դասարան



ԵՐԿԻՐՆԵՐՆ ՈՒ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐԵՐԸ

Նոյեմբերին Լիբանան կը տօնէ իր անկախութեան տօնը: Երկիրներ անկախ կ'ըլլան, երբ անոնք իրենց վրայէն կը թօթափեն այլ երկրի մը իշխանութիւնը ու կը դառնան անկախ երկիրներ: Յիշենք, որ Մեծն Բրիտանիա, ու կարգ մը այլ երկիրներ անկախութեան տօն չունին, որովհետեւ անոնք երբեք չեն իշխուած այլ պետութիւններու կողմէ: Սկսելով Լիբանանի անկախութենէն՝ ձեզի պիտի ծանօթացնենք աշխարհի տարբեր երկիրներու անկախութեան տօներուն: Անշուշտ նախապէս անդրադարձած ենք Հայաստանի ու Արցախի անկախութեան: Այսպէս,

Արցախ ազերիներու դէմ իր տաք պատերազմի օրերուն կը յայտարարէ իր Անկախութիւնը 2 Սեպտեմբեր 1991-ին, քանի որ կը մերժուի անոր վերամիաւորումը Հայաստանին, իսկ Հայաստան իր անկախութիւնը կը հռչակէ 19 օր ետք՝ 21 Սեպտեմբեր 1991-ին, ու երկուքը կը դառնան անկախ հանրապետութիւններ:

Յունաստան

1453-ին Սուլիման Բ. Ֆաթիհ կը գրաւէ Բիզանդիոնի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը, այդ թուականէն մինչեւ 1821 Յունաստան կը մնայ Օսմանեան կայսրութեան իշխանութեան տակ: Թրքական տիրապետութեան ընթացքին յոյները իրենց երկրին ամբողջ տարածքին ապստամբութիւններ կ'ընեն: Անոնցմէ մէկը կը սկսի 25 Մարտ 1821-ին ու կ'աւարտի 1829-ին: Յունական յեղափոխութեան յաջողութեան օգտակար կը դառնայ ռուս-թրքական պատերազմը, որուն աւարտէն ետք կը կնքուի համաձայնագիր մը, ուր կ'որոշուի ինքնավարութիւն տալ յոյներուն: Աւելի ուշ՝ 3 Փետրուար 1830-ին, երեք պետութիւններու՝ Ռուսաստանի, Բրիտանիոյ եւ Ֆրանսայի որոշումով Յունաստան պաշտօնապէս կը ճանչցուի անկախ պետութիւն: 1921-ին սկսած ապստամբութեան առաջին օրը Յունաստանի մէջ կը կշռուի իբրեւ ազգային տօն, որովհետեւ այդ ապստամբութեան շնորհիւ յոյները տապալեցին Օսմանեան տիրապետութիւնը:




Լաոսը եւ Գամպուիան: 1941-1945 թուականներուն ժամանակակից Վիետնամի տարածքը կը գրաւուի Ճափոնի կողմէ: Գրաւումին յաջորդ օրն իսկ Վիետնամի մէջ կը սկսի ժողովրդական ապստամբութիւն: Ապրտամբները կը գրաւեն Հալոնգ եւ կը ստիպեն կայսրը հրաժարելու գահէն: 2 Սեպտեմբեր 1945-ին կը կարդացուի Վիետնամի անկախութեան Հռչակագիրը: 2 Յուլիս 1976-ին տեղի կ'ունենայ Հիւսիսային ու Հարաւային Վիետնամի պաշտօնական միացումը:



Պուլկարիա

14-րդ դարու վերջերը Պուլկարիան կ'անցնի Օսմանեան կայսրութեան տիրապետութեան տակ: 1878-ին Պերլինի վեհաժողովին կ'որոշուի, որ Հիւսիսային Պուլկարիան դառնայ ինքնավար իշխանութիւն Թուրքիոյ հովանիին տակ, իսկ Հարաւային Պուլկարիան վերածուի թրքական նահանգի: 6 Սեպտեմբեր 1885-ին տեղի կ'ունենայ ապստամբութիւն, որուն շնորհիւ տեղի կ'ունենայ վերամիաւորում: Աւելի ուշ, օգտուելով երիտթուրքերու յեղափոխութեան հետեւանքով Թուրքիոյ մէջ ստեղծուած կացութենէն, 22 Սեպտեմբեր 1908-ին կը յայտարարուի Պուլկարական Անկախ Թագաւորութեան հռչակագիրը:




Կիպրոս

Կիպրոս կղզին տարբեր ժամանակներու ընթացքին եղած է բիզանդացիներու, արաբներու ու ֆրանսացի ասպետներու տիրապետութեան տակ: 16-րդ դարուն կղզին կը գրաւուի օսմանցի թուրքերուն կողմէ: 1878-ին Կիպրոսը կ'անցնի Մեծն Բրիտանիոյ իշխանութեան տակ, հակառակ անոր որ պաշտօնապէս կղզին կը մնար Օսմանեան կայսրութեան կազմին մէջ. սակայն անգլիական գաղութ կը յայտարարուի միայն 1925 թուականին: 1950 Յունուարին Կիպրոսի յոյն բնակչութիւնը հանրաքուէ մը կը կազմակերպէ, ըստ որուն՝ բնակիչներուն 96 առ հարիւրը կը քուէարկէ Կիպրոսը Յունաստանին միացնելու առաջարկին, սակայն Անգլիա կը մերժէ ճանչնալ ժողովուրդին քուէարկութեան արդիւնքը: Միայն 1959-ին Մեծն Բրիտանիա (Անգլիա), Յունաստան եւ Թուրքիա կը ստորագրեն համաձայնագիր մը՝ 1 Հոկտեմբեր 1960-ին Կիպրոսին անկախութիւն տալու գծով:



Ամերիկա

Անգլիացիները 16-րդ դարու սկիզբը կը գրաւեն Հիւսիսային Ամերիկան: Իսկ Հիւսիս-ամերիկեան գաղութներու կողմէ անկախութիւն ձեռք ձգելու համար առաջին քայլը կ'ըլլայ այն, որ 1775-ին ամերիկացի վաճառականներ կը մերժեն բրիտանական դրոշմաթուղթը: Այս թուականին է, որ կը սկսի հիւսիսամերիկեան 13 գաղութներու պատերազմը անկախութեան համար: Այս պատերազմի ընթացքին՝ 4 Յուլիս 1776-ին, Ֆիլատելֆիայի մէջ տեղի ունեցած նիստի ընթացքին կ'որոշուի Բրիտանիայէն անջատուելու անկախութեան հռչակագիրը: Այս հռչակագիրին մէջ առաջին անգամ ըլլալով կը յիշուի «Ամերիկայի Միացեալ Նահանգներ» անունը: Բրիտանիան 13 գաղութներուն անկախութիւնը կը ճանչնայ միայն 1783 թուականին:



Վիետնամ

19-րդ դարուն Ֆրանսան իր իշխանութեան տակ կ'առնէ Հնդկաչինի տարածքները, այսինքն՝ ներկայիս Վիետնամը,

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵՆԷՆ ՓՐԿՈՒԱԾ ՀԱՅ ՈՐԲԵՐՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԳԸ

ԿԱՐՂԱՔ



Նոյեմբեր 18-ին Սպիտակ տան այցելուներու սրահին մեջ սկսած է ցուցադրուիլ հայ որբերու կողմէ աշխատցուած «Ղազիրի գորգը», որ նուիրուած էր այդ օրերու Ամերիկայի նախագահ Քալուին Զուլիճին, իբրեւ երախտագիտութիւն Ամերիկայի ժողովուրդին, որ ամերիկեան նպաստներուն շնորհիւ մեծապէս օգտակար հանդիսացած է Հայոց ցեղասպանութենէն մազապուրծ ազատած հայ որբերուն: Նշենք նաեւ, որ գերմանացի Զիւնցլեր ամուլը, հակառակ տիրող դժուարութիւններուն, յաջողած է Սուրիա, ապա Լիբանան փախցնել ութ հազար հայ որբ, որոնք ամերիկեան «Նիր Իսթ Ռիլիֆ» հիմնարկին հովանաւորութեամբ հաստատուած են Ղազիրի շրջանին մէջ: Հոն որբե-




րը, 18 ամիս շարունակ աշխատելով աւարտած են աշխատանքը այդ պատմական գորգին, որ կը ներկայացնէ Սուրբ Գիրքի Ադամի պարտեզը:

1926-ին Ամերիկայի նախագահին նուիրուած այս գորգն է, որ կը ցուցադրուի Սպիտակ տան այցելուներու սրահին մէջ, ինչ որ քննարկումի առարկայ դարձած է թրքական լրատուամիջոցներուն մէջ, որոնք այս գորգի ցուցադրութիւնը կը

սկատեն «ցեղասպանութեան խորհրդանիշ» ու կը համարեն սփիւռքահայութեան կողմէ կազմակերպուելիք ցեղասպանութեան հարիւրամեակի ձեռնարկներու արշաւին մեկնակետը:

կը համարեն սփիւռքահայութեան կողմէ կազմակերպուելիք ցեղասպանութեան հարիւրամեակի ձեռնարկներու արշաւին մեկնակետը:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՎԷՊ ՄԸ



Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի ծիրէն ներս հրատարակուած է Նորգելանտացի Լէն Ուիքսի 800 էջոց վէպը:

Այս վէպի մասին նշանաւոր հայագետ Վերժինէ Սվազեան կը յայտնէ, որ վէպը հրատարակողը մասնագիտութեամբ ո՛չ բանասէր է եւ ոչ ալ պատմաբան, այլ օդաչու մը, որ յանկարծ կը հետաքրքրուի հայ ժողովուրդի պատմութեամբ եւ ի մասնաւորի անոր ապրած ամենէն ողբերգական շրջանով: Շարունակելով իր գնահատականը՝ Սվազեան կ'ըսէ, թէ շատ մեծ նուիրուածութիւն է, որ երկու տարուան ընթացքին նման վէպ մը գրուած է օտարազգի անձնաւորութեան մը կողմէ եւ այդ ալ երեք լեզուներով:

ԹՈՒՐԲԻՈՅ ՄԷՋ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի սեմին բեմադրիչ Նիհաթ Մուրչիթիլընար սկսած է բեմադրութեան՝ հայոց տեղահանութեան եւ կոտորածներու մասին պատմող գործի մը, որուն հեղինակն է Օզկիւր Օզջան: Հեղինակը յայտնած է, որ իր գրած ստեղծագործութիւնը բեմ պիտի բարձրանայ 2015 թուականին: Խօսելով իր գրածին մասին՝ ան յայտնած է, թէ Թուրքիոյ մէջ ազգային փոքրամասնութիւններուն հարցերը չեն սկսած ու աւարտած 1915-ին, այլ կը շարունակուին մինչեւ այսօր: Ան կը յայտնէ, թէ իր թատերախաղը գրելու ժամանակ կը փորձէ գտնել պատասխան ու հանդիսատեսին հարցնել, թէ ի՞նչ փոխուած է անցնող 100 տարիներու ընթացքին: Ներկայացման մէջ հայրենիքէն պարտադրաբար հեռացուողները իրարու կը հանդիպին Անդո քեռիին մօտ... Ան կը յայտնէ, թէ շատ դժուարութիւն ունին սրահ գտնելու, որովհետեւ սրահի տէրերը կը վախնան, որ Հայոց ցեղասպանութեան մասին ներկայացուելիք թատերախաղի մը համար, եթէ իրենց սրահը տրամադրեն, իրենց ինչքերը վտանգի տակ դրած կ'ըլլան: Արդեօք փոփոխութիւն կը տեսնե՞նք 100 տարի առաջուան ու ներկայի թուրքին միջեւ...

Նշենք նաեւ, որ այս թատերախաղը պիտի թարգմանուի նաեւ հայերէնի:

WE REMEMBER
THE ARMENIAN GENOCIDE
1915
APRIL 24TH



ՆՅԱՆՁԱՆ

ՏԱՍԸ ՎԱՅՐԿԵԱՆԷՆ ՀՆԳԿԱՀԱՊԻ ՌԻՏԵԼ

Ամերիկացի Չեսթնադը հնդկահալ ուտելու նոր մրցանիշ մը հաստատած է: Արդարեւ, ան մասնակցելով Շնորհակալութեան օրուան նուիրած ուտելու մրցումի մը, որ տեղի ունեցած է Մաշանտակետ քաղաքին մէջ, ապահոված է այս մրցանակը: Իւրաքանչիւր մասնակցողի տրամադրուած է 9 քկ կշռող եփած հնդկահալ մը: Մասնակիցները հնդկահալը կերած են առանց դանակ- պատառաքաղի: Յաղթողը, որ եղած է Չեսթնադը, 10 վայրկեանի ընթացքին կերած է 4.2 քկ հնդկահալ: Ան յայտնած է, որ հնդկահալին միսը շատ համեղ էր, ու ինք շատ ուրախ է, քանի որ յաջողած է յաղթել:



202 ԱԻԵԼՈՐԳ ԱԿՈՒՅ

Հնդկաստանի մէջ բժիշկներ յաջողած են քաշել 202 աւելորդ ակոռներ 7-ամեայ աղջկան մը բերանէն: Նիու Տելիի ապրող այս աղջնակը ակոռայի շատ զօրաւոր ցաւ ունեցած է, Մայրը, այտին վրայ ուռեցք տեսնելով, զաւակը տարած է բժշկական գիտութիւններու հիմնարկին՝ դեմքի-ծնօտի բաժանմունքը՝ ենթադրելով, որ հարցը կը լուծուի՝ կաթնատամները քաշելով: Սակայն հոն ի յայտ եկած է, որ աղջնակը ոչ բնական ոսկրային ձեւաւորում ունի, որուն պատճառով անոր բերանին մէջ աճած է 202 աւելորդ ակոռներ: Բժիշկները ջանք թափած են յաջողութեամբ կատարելու վիրաբուժութիւնը՝ աղջնակին ապահովելու բնականոն... բերան՝ բնականոն քանակի ակոռներով:

ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋԻՆ ԻՆՔՆԱՇԱՐԺԸ ՋՐԱԾՆԱՅԻՆ ՇԱՐԺԻՉՈՎ

Ջրածնային շարժիչով աշխարհի առաջին ինքնաշարժը Միրայ («Mirai»՝ ապագայ), արտադրուած է «Թոյոթա» ընկերութեան կողմէ եւ ճափոնի մէջ վաճառքի պիտի դրուի Դեկտեմբեր 15-ին: Ան կ'արժէ շուրջ 62 հազար տոլար: Ամերիկայի ու Եւրոպայի մէջ այս ինքնաշարժը կարելի պիտի ըլլայ գնել յառաջիկայ տարի՝ ամրան: Ճափոնի մէջ «Թոյոթա» ընկերութիւնը յոյս ունի, որ միևնույն տարուան վերջը պիտի ծախէ շուրջ 400 Միրայ ինքնաշարժ, մանաւանդ որ երկրի կառավարութիւնը խոստացած է 17 հազար տոլարի յատկացում ընել այս ինքնաշարժէն գնող անհատներուն: Այս ինքնաշարժին աշխատանքի միակ մղիչ ուժը ջուրն է, որ ոչ մէկ ձեւով վնասակար է կենսոլորտին:



ԹԱՓԱՆՑԻԿ ՄԱՇԿՈՎ ՄՈ՞ԻԿ

Ճափոնցի կենսաբանները յաջողած են բուծանել տարրալուծարանային մուկեր, որոնց մաշկը ամբողջովին թափանցիկ է եւ ներքին գործարանները դուրսէն կ'երեւին: Աշխատանքին նպատակը եղած է այն, որ մուկին արեան մէջէն հանուի կարմիր գոյնը՝ արեան մէջ ներարկելով յատուկ նիւթեր: Գիտնականները եւս անակնկալի եկած են, երբ տեսած են, որ մուկին մարմինը ամբողջութեամբ թափանցիկ դարձած է, երբ արեան կարմիր գոյնը հանած են: Այս գիտին շնորհիւ հիմա աւելի դիւրին պիտի ըլլայ ուսումնասիրել կենդանիներուն մարմնակազմութիւնը եւ որոշ հիւանդութիւններու զարգացումը:

ՃԱՇԱՐԱՆ ՍԱՌԱԾ ԳԵՏԻ ՎՐԱՅ

Անգլիական ընկերութիւն մը յաղթանակ տարած է լաւագոյն նախագիծ պատրաստելու մրցումին՝ ներկայացնելով սառած գետի վրայ ճաշարան կառուցելու գաղափարը: Այս գաղափարը ներկայացնող ճարտարապետներուն համաձայն՝ ճաշարանը կը յիշեցնէ սառոյցէ հսկայական կտոր մը: Այս ճաշարանը պիտի կառուցուի Վինիպեգ քաղաքի մէջ՝ քանատական երկու գետերու՝ Ռետ Ռիվըր եւ Ասսինիբոյնի միացման վայրին մէջ, եւ յաճախորդները կ'ընդունի Յունուար 22-էն Փետրուար 13: Ընկերութիւնը պիտի բաղկանայ չորս մասերէ՝ խոհանոցէ, այցելուներու համար նախատեսուած երկու սենեակէ եւ տանիքէ, իսկ ուտեստեղէնները պիտի պատրաստեն տեղացի խոհարարները:





«ՍԱՈՒՆՏ ԱՖ ՄԻՒԶԻՔ» ԺԱՊԱՒԵՆԸ

ԿԱՐՆԱԹ



Այս երաժշտախառն ժապաւենը հիմնուած է իրական կեանքէ առնուած դրուագի մը վրայ, սակայն բաւական փոփոխութիւններով ներկայացուած է՝ դառնալու հետաքրքրական ժապաւեն մը, որ ներգրաւած է բազմահազար մեծ ու փոքր հանդիսատեսներ:



Աւտրիոյ Սալզպըրկ քաղաքին գեղեցիկ վայրերէն մէկուն մէջ կ'ապրի կինը կորսնցուցած գնդապետ մը՝ ճորճ Վոն Թրաբ, որ ունի եօթը զաւակ: Ան իր չարածնի պզտիկներուն հոգ տանող կառավարիչ մը կը փնտռէ, եւ այս ձեւով իր քով կը հասնի Մարիա անունով երիտասարդ դաստիարակ մը՝ զրկուած Նանպըրկ վանքի մայրապետներու կողմէ: Պզտիկներուն հայրը՝ ճորճ Վոն Թրաբ, շատ խստապահանջ ու կարգապահ անձ մը, զինւորական խիստ օրէնքներով կը կառավարէ տունը, որ խորքին մէջ պալատ մըն է: Երբ Մարիան կը ստանձնէ պզտիկներուն հոգատարութիւնը շատ փոփոխութիւններ կը յառաջացնէ հոն: Ան խաղեր խաղալ ու երգել կը սորվեցնէ պզտիկներուն, որոնք կը կազմեն երգչախումբ մը: Այսպէս, ուրախ մթնոլորտ մը կը սկսի տիրել նախկին լարուած մթնոլորտին փոխարէն, ինչ որ կը նեղացնէ գնդապետ ճորճ Թրաբը, որ կը խնդրէ Մարիայէն ձգել տունը ու վերադառնալ մայրապետանոց... Սակայն ժապաւենի աւարտին մենք կը տեսնենք Մարիան դարձեալ Վոն Թրաբի պալատին մէջ: Գիտնալու համար մանրամասնութիւններն ու մանաւանդ լսելու համար երգերը կ'արժէ դիտել այս հռչակաւոր ժապաւենը, որուն պատրաստութեան 50-ամեակը պիտի ըլլայ յառաջիկայ տարի:



զապահ անձ մը, զինւորական խիստ օրէնքներով կը կառավարէ տունը, որ խորքին մէջ պալատ մըն է: Երբ Մարիան կը ստանձնէ պզտիկներուն հոգատարութիւնը շատ փոփոխութիւններ կը յառաջացնէ հոն: Ան խաղեր խաղալ ու երգել կը սորվեցնէ պզտիկներուն, որոնք կը կազմեն երգչախումբ մը: Այսպէս, ուրախ մթնոլորտ մը կը սկսի տիրել նախկին լարուած մթնոլորտին փոխարէն, ինչ որ կը նեղացնէ գնդապետ ճորճ Թրաբը, որ կը խնդրէ Մարիայէն ձգել տունը ու վերադառնալ մայրապետանոց... Սակայն ժապաւենի աւարտին մենք կը տեսնենք Մարիան դարձեալ Վոն Թրաբի պալատին մէջ: Գիտնալու համար մանրամասնութիւններն ու մանաւանդ լսելու համար երգերը կ'արժէ դիտել այս հռչակաւոր ժապաւենը, որուն պատրաստութեան 50-ամեակը պիտի ըլլայ յառաջիկայ տարի:



- «Սաունտ Աֆ Միւզիք» ժապաւենը առաջին անգամ սկսած է ցուցադրուիլ 1965-ին. ամերիկեան երաժշտական ժապաւեն մըն է, որուն բեմադրիչն է Ռոպերթ Ուայզ:
- Ժապաւենը հիմնուած է «Տը Սթօրի աֆ Թրաբ Ֆամիլի Սինկըրս» գիրքին վրայ, որուն հեղինակն է Մարիա Վոն Թրաբ:
- Այս պատմութիւնը տեղի ունեցած է Համաշխարհային Բ. պատերազմի ընթացքին:
- Թրաբ ընտանիքին պալատը, որ՝ իբրեւ պանդոկ կը գտնուի Սալզպըրկի մէջ, ներկայիս բաց է բոլոր հիւրերուն համար: Ուրեմն եթէ կը փափաքիք տեսնել այն վայրը, ուր պատրաստուած է այս ժապաւենը, կարելի է այցելել այդ քաղաքը...
- Հոկտեմբեր 2011-էն սկսեալ այս ժապաւենը հանրութեան կը հրամցուի իբրեւ երաժշտական թատրոն, որ այս տարի ելոյթ ունեցաւ նաեւ Լիբանանի մէջ:
- 2015-ին յատուկ ցուցահանդէս մը տեղի պիտի ունենայ այս ժապաւենին զանազան երեսները հանրութեան ներկայացնելու համար:
- «Սաունտ Աֆ Միւզիք» ժապաւենը ապահոված է հինգ Ակադեմական մրցանակ, որոնց շարքին են լաւագոյն պատկերահանումն ու ձայնի ընկերակցութիւնը:



ԼՈՅՍ ՏԵՍԱԲ

1 Հայաստան

2 Հայաստան

Շանթօթանանք
Եւ
Գունաւորենք Հայաստանը

Պատրաստեց՝ Ալեակ Լատոյեան
Հրատարակութիւն՝ Համագայինի Վ. Մէթեան Տպարան



Ժ Ա Մ Ա Ն Ց


9	8	9	11
9	4	9	12
7	4	10	8

10	12	9	10
10	7	5	11
6	8	8	10

6	8	6	5
6	7	10	8
6	4	8	5

6	3	4	3
10	4	5	3
2	9	6	9

Սկսելով սլաքեն՝ հասի՛ր վերջ գրուած տուփիկին, ուր թիւերուն գումարը պէտք է ըլլայ 50: Ուշադի՛ր. պէտք է օգտագործես հորիզոնական եւ ուղղահայեաց գիծեր, ինչպէս նաեւ իւրաքանչիւր տուփիկ կրնաս գործածել մէկ անգամ:




Գտի՛ր մանչուկին հասցնող ճամբան:




Գտի՛ր՝ ձեռնոցներուն գոյգերը:

1 -		2 x	3 x		7 +
1 -	9 x		1 -		
				3 x	

Ամբողջացո՛ւր տուփիկները 1-3 թիւերով, պայմանաւ որ սիւնակի կամ շարքին վրայ չկրկնուին թիւերը: Ամբողջացնել կարենալու համար պէտք է հետեւիլ նշուած թիւերուն ու թուաբանական գործողութիւններուն: Օրինակ՝ անգամ 3, այսինքն՝ երկու թիւ իրարու հետ անգամ ընելով՝ պատասխանը 3 եղած է: Ուշադի՛ր. իւրաքանչիւր գործողութիւն իրարմէ անջատուած են հաստ գիծերով:



Լաւ դիտե՛ պատկերը ու մատնանշե՛ այն մէկը, որ տարբեր է միւսներէն:



Ամբողջացո՛ւր քառակուսիները երկրաչափական պատկերներով, պայմանաւ որ նոյն պատկերը չկրկնուի ոչ մէկ սիւնակի, շարքի կամ տուփիկի մէջ:



ՄԻՋ-

ԴՊՐՈՑԱԿԱՆ

ԻՄ ՆԱԽԵՆՏՐԱԾ ԴՊՐՈՑՍ

Մեր դպրոցը գեղեցիկ է ու մեծ: Ուսուցիչները շատ լավ կը բացատրեն դասը:

Իմ նոր դպրոցս կ'ուզեմ ըլլայ իմ հին դպրոցիս պէս, այսինքն՝ մեծ, ուշիմ գրատախտակ եւ համակարգիչ ունեցող, ինչպէս նաեւ լավ դաս բացատրող ուսուցիչներ ու լավ ընկերներ եւ գեղեցիկ գրադարան մը: Չեմ ուզեր, որ տանս մէջ դաս սորվիմ մարդամեքենայ ուսուցիչի մը միջոցաւ:

Ես կ'ուզեմ, որ այս ձեռով ըլլայ իմ նոր դպրոցս եւ ամբողջ աշխարհի մանուկներն ալ այս ձեւի դպրոցներ յաճախեն:

ԿԱԼԻՆԱ ՍԱԼՈՐԵԱՆ
5-րդ դասարան

բնութիւնը դիտելու համար: Երբեմն գիրք կը կարդամ, երբեմն ալ շուրջս կը դիտեմ:

Պատշգամը իմ նախասիրած վայրս է. հոն յաճախ թռչուններ ալ կ'այցելեն: Օր մը թռչուն մը բռնեցի եւ վանդակի մը մէջ պահեցի, բայց քանի մը օր ետք ան սատկեցաւ:

Հիմա յաճախ պատշգամ կ'ելլեմ եւ կը սպասեմ այդ թռչնիկին նմանող սիրուն թռչնիկի մը:

ԿԱՐՕՏ ԶԱՆԵՇԵԱՆ
6-րդ դասարան

ՄԵՐ ԴՊՐՈՑԸ

Իմ դպրոցս ինծի համար լաւագոյնն է:

Մեր դպրոցը շատ ընդարձակ է: Ան ունի նոր ու կոկիկ գրադարան մը, ուր գրեթէ բոլոր զբօսանքներուն կը փափաքիմ ելլել եւ գիրք կարդալ: Մեր դպրոցը ունի նաեւ ոտնազնդակի դաշտ, գծագրութեան սենեակ, բազմաթիւ դասարաններ, որոնց մէջ կը գտնուին նոր պահարաններ եւ գրասեղաններ, համակարգիչ եւ ուշիմ գրատախտակ:

Ես շատ կը սիրեմ այս դպրոցը, որովհետեւ պարտեզներ ունի, եւ ամէն կողմ բուսականութիւն կայ: Ունի նաեւ ընդարձակ տարածութիւն:

ԼԻՄԻ ՈՒՆՃԵԱՆ
5-րդ դասարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՐԱՆՍ

Հայաստանի մէջ «Չարենց» պողոտային վրայ բնակարան մը ունիմ: Ամէն ամառ մեծ ուրախութեամբ հոն կ'այցելեմ: Ես շատ հանգիստ եւ ուրախ կը զգամ հոն: Յաճախ բակ կ'ելլեմ, կը խաղամ եւ ժամերով կը դիտեմ գեղեցիկ երեւանը:

Երբեմն կատուներ կ'այցելեն ինծի: Ես ալ զանոնք կը շոյեմ, կը կերակրեմ եւ հաճոյքով կը զբաղիմ անոնց հետ:

Շատ կը սիրեմ Հայաստանի բնակարանս:

ԿԱՐԷՆ ԽԻՏԱՎԵՐՏԵԱՆ
6-րդ դասարան

ՆԱԽԱՍԻՐԱԾ ՎԱՅՐՍ

Նախասիրած վայրս մեր տան պատշգամն է: Երբ ձանձրանամ, կ'երթամ ու կը բազմիմ գեղեցիկ օրօրոցիս վրայ, որ գահի մը կը նմանի: Ժամերով կ'օրօրուիմ ու կը դիտեմ շուրջս՝ գեղեցիկ բնութիւնը:

Երբեմն գիրք կը կարդամ, երբեմն կը գծեմ, յաճախ ալ կը խաղամ: Տանս պատշգամը նախասիրած վայրս է, որովհետեւ լուռ է եւ զով. հոն կրնամ հանգստանալ եւ քիչ մըն ալ քնանալ: Առտու կանուխ կը լսեմ թռչուններուն ճռուողիւնը, իսկ իրիկունը կը գմայլիմ գեղեցիկ լուսինին վրայ, որուն շուրջ անթիւ աստղեր կը փայլփլին:

ՄԻԼԱ ԽԱՉԱՏՈՐԵԱՆ
6-րդ դասարան

ԾՈՎԸ

Իմ նախասիրած վայրս ծովափն է: Ամէն շաբաթ երեկոյեան կ'երթամ ծովափ եւ ժամերով կը նստիմ ու կը դիտեմ գեղեցիկ վերջալոյսը:

Ծովափը իմ նախասիրած վայրս է, որովհետեւ խաղաղ է եւ ամալի. հոն կը մոռնամ բոլոր նեղութիւններս եւ աչքերս հորիզոնին սեւեռած կը լսեմ՝ մեղմ ալիքներուն ձայնը ու կը հանգստանամ:

ՃՈՐՃԻՕ ՖԵՂԱԼԻ
6-րդ դասարան

ՀԱՆԳԻՍՏԻ ԺԱՄԵՐ

Երբ դասերես կը յոգնիմ կամ տխուր եմ ու մտահոգ, կ'ուզեմ առանձնանալ կանաչազարդ բնութեան մէջ՝ լսելու համար գետին կարկաչը եւ թռչուններուն ճռուողիւնը:

Կը նստիմ խնձորենիի մը շուքին եւ կը դիտեմ երկինքը, ուր փափուկ ամպերը երբեմն՝ կը դառնան անասուններ, երբեմն՝ իրեր: Իսկ գունաւոր եւ օդապար թիթեռնիկները՝ ծաղիկէ-ծաղիկ թռչելով, աւելի եւս կը գեղեցկացնեն բնութիւնը:

Շատ կը սիրեմ բնութիւնը, որովհետեւ անիկա միակ տեղն է, ուր միտքս եւ հոգիս կը հանգստանան: Բնութիւնը յարմարագոյն տեղն է մտածելու, կարդալու եւ երազելու:

ՆԱՐԷ ԳՈՂՕՂԵԱՆ
6-րդ դասարան

ԵՐԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԵՐ

Մեր տան պատշգամին անկիւնը երանութեան ժամեր կ'անցընեմ: Այդ փոքրիկ անկիւնը նստած՝ կը դիտեմ ծովը, թռչունները, երբեմն ալ մեկնող ու վերադարձող օդանաւերը:

Շաբաթ օրերը կանուխ կ'արթնանամ, որպէսզի դիտեմ գեղեցիկ արեւածագը, որ կը բոցավառէ երկինքը: Այս փոքրիկ անկիւնը կը նմանցնեմ տաքուկ բոյնի մը, ուր կրնամ գիրք կարդալ, պառկիլ ու երազել:

ՔՐԻՍԹԻՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
6-րդ դասարան

ՀԱՅՐԵՆԻՔՍ

Իմ նախասիրած վայրս մեր գիւղի տան մօտակայ պարտեզն է իր պտղատու ծառերով, ծաղիկներով եւ թարմ խոտով:

Պարտեզս շատ լավ եւ հանդարտ է. կեսօրէ ետք երբ բոլոր գիւղացիները կը քնանան, ես ծառի մը տակ կ'երկարիմ եւ գիրք կը կարդամ: Երբ յոգնիմ, կը դիտեմ կապուտակ երկինքը եւ կը գմայլիմ ամպերուն վրայ, զորս կը նմանցնեմ զանազան իրերու եւ անասուններու: Յետոյ աչքերս կը փակեմ ու քունի կ'անցնիմ...

Շատ կը սիրեմ հայրենիքիս բնութիւնը:


ՆԱՐՕՏ ԽԱՉԱՏՈՐ
6-րդ դասարան

ԹՈՉՆԻԿԻ ՄԸ ԿԸ ՍՊԱՍԵՄ

Երբ դասերս վերջացնեմ պատշգամ կ'ելլեմ հիանալի




Լուի Զիլքեճեան - Բ. դասարան




Զրիսթ Արապեան - Գ. դասարան




Ռազմիկ Մազազեան - Բ. դասարան



Լուչիանա Ղազարեան - Գ. դասարան



Սիրակ Ռզեան - Գ. դասարան



Փաթիկ Զայթայեան - Գ. դասարան



Արա Տիշչեքեան - Գ. դասարան



Սերա Թորոսեան - Գ. դասարան



Տէյվիտ Գեորգ - Դ. դասարան